ա) Ընդհանուր կառուցվածքն ու բովանդակային ընդգրկումները

«...Կառուցվածքի հարցում հայ պատմիչը անկաշկանդ է: ***Պատմագրական երկը պարտադիր կառուցվածք չի պահանջում»***,– գրում է Մայիս Ավդալբեգյանը (ընդգծումը բնագրում– Ա.Ն.)[4]: Այդուհանդերձ, ցանկացած պատմագրական երկ ունի որոշակի կառուցվածք, ավելին՝ կառուցվածքային որոշ տարրեր նույնիսկ ընդհանրական են:

Պատմագրական երկի կառուցվածքը մեծապես պայմանավորված է բովանդակությամբ և թելադրվում է վկայագրվող իրադարձությունների բնույթով: Հատկապես շարադրանքի ներքին տարածքում առկա կառուցվածքային միավորները պատճառաբանվում են պատմությունը համակողմանի, ընդգրկուն, հավաստի, միևնույն ժամանակ՝ առանց ավելորդաբանությունների ու երկարաբանությունների ներկայացնելու մտահոգությամբ ու ցանկությամբ: Այլ հարց է՝ պատմիչն, ի վերջո, հասե՞լ է դրան, թե՞ ոչ:

«Գիրք պատմութեանց»-ի առաջին իսկ պարբերության մեջ Դավրիժեցին ուրվագծում է իր երկի կառուցվածքային յուրահատկություններն ու բովանդակային սահմանները, թեպետ հանգա-

---

4 ***Մայիս Ավդալբեգյան,*** Հայ պատմագրության ժանրային մի քանի առանձնահատկություններ, «Հայ միջնադարյան գրականության ժանրեր» գրքում, էջ 17: